

## ՀԱՅԱՍՏԱՆԻԿԸ, ԱՆՁՐԵՎԱԲԵՐ ԾԵՍԵՐԸ ԵՎ ՎԻՃԱՊՆԵՐԸ

### Խոհան Հովսեփյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

#### Ներածություն

Վիշապաքարեր ուսումնասիրող հետազոտողները համակարծիք են, որ դրանք կապված են ջրի պաշտամունքի հետ (Արելյան 1941, Թորոխյան, Բորբխյան 2015, Բորբխյան և այլը 2015): Այս տեսակետի ճշմարտացիության մասին են վկայում ձկնակերպ վիշապաքարերի առկայության հանգամանքը, ինչպես նաև իրենց նախնական տեղում՝ այսպիսի լեռնային գոգավորություններում տեղադրված լինելը, որտեղ, ունիեթով պայմանավորված, ջուր է կուտակվում: Տրամարանական է ենթադրել, որ ջրային ռեսուրսները, որոնք «վերահսկվել են վիշապների կողմից», օգտագործվել են ոչ միայն մարդկանց ու կենդանիների խմելու, այլև երկրագործական նպատակներով: Ավելին, ջրային ռեսուրսների մեծ մասն ընդհանրապես ծախսվում է ոռոգման նպատակներով և երաշտի կամ պարզապես ջրի պակասի դեպքում առաջին հերթին տուժում են դաշտային մշակաբույսերը: Այսինքն, նշանակալի ջրային ռեսուրսները կարևոր են և կենսական, երբ մշակաբույսերի ցանքերը ոռոգելու խնդիր կա, այլապես միայն մարդկանց ու կենդանիների խմելու և կենցաղային կարիքների բավարարման համար կարելի է գոյատևել նաև սակալ ջրային աղբյուրներ օգտագործելով: Հսարուսարանական տվյալները վկայում են, որ Հայաստանի, և ընդհանրապես Անդրկովկասի տարածքում, բրոնզի դարում, այսինքն վիշապ-կոթողների գոյության հիմնական դարաշրջանում, բուսաբուծությունը գրեթե ամրող-ջությամբ ներկայացված է եղել հացարույսերի մշակությամբ: Այս փաստերի և ենթադրությունների համատեքստում ակնկալի է, որ վիշապ-հացահատիկ առնչությամբ ավանդույթներ և ծեսեր են գոյություն ունեցել<sup>1</sup>:

#### Հացահատիկը և անձրևաբեր ծեսերը

Ենթադրաբար վիշապաքարերն ունեցել են ջրին, մասնավորապես անձրևին առնչվող ծիսա-

կան գործառույթներ, որոնք չեն պահպանվել մինչև մեր ժամանակները: Սակայն, հնարավոր է, որ այդ ծեսերի ծևափոխումները կամ դրանց որոշ դրվագները պահպանվել են այլ անձրևաբեր ծեսերում: Անդրադառնալով հացահատիկին նշենք, որ այն օգտագործվել է բազմաթիվ անձրևաբեր ծեսերում, թեև հացահատիկի գործառույթը հաճախ ստվերված է կամ հատուկ ուշադրության չի արժանացել: Մասնավորապես, տարբեր անձրևաբեր ծեսերի ժամանակ տնեսուն շրջող թափորի հավաքած նվերների մի զգալի մասը հացահատիկ (հաճախ՝ ցորեն) կամ այլուր է եղել, որը ծեսի ավարտական փուլում օգտագործվել է որևէ ուտեստ, սովորաբար հալվա կամ կաթնով պատրաստելու համար: Դրանք ուսում էին ամրող գյուղով, կամ միայն երեխաները, կամ էլ բաժանվել է աղքատներին (Լիսիցյան 1969, Բդյյան 1972, Ղազիյան 1983, Հայրապետյան 2004, Մկրտչյան 2016, Հովսեփյան 2017, Հօնսերյան 2018):

Հատկանշական է հացահատիկի և դրանցով պատրաստված ուտեստների օգտագործումը «ցաման խաչերին» վերաբերող ծեսերում: «Ցաման խաչերը», ըստ ժողովրդական հավատալիքների, անձրևաբեր, անձրևախափան կամ ընության արհավիրքները կանխող գործություն ունեցող խաչքարեր են: Ենթադրվում է, որ ցաման խաչի երևոյթն առաջացել է, երբ քրիստոնեության ժամանակներում որոշ խաչքարերի վերագրվել է հավատալիքային այնպիսի գործառույթ, որը նախորդ դարաշրջաններում ունեցել են վիշապաքարերը (Արելյան 1941, 88-89): Այդ ենթադրության օգտին կարող է վկայել ցաման խաչերի բնակավայրերից դուրս՝ բլուրների վրա տեղադրված լինելը (Մրվանձայանց 1978, 80-81, Հօնսերյան 2018): Ցաման խաչերին այցելու և համապատասխան անձրևաբեր ծեսեր իրականացնելու ժամանակ հաճախ մատադ, հացկերույթ և խրախճանք է կազմակերպվել, որին սովորաբար մասնակցել են աղջիկները կամ ընդհանրապես պատանիներն ու երեխաները, երբեմն՝ չամուսնացած կամ այրի կանայք: Եթե այցին նվիրատվություններ են նախորդել, հալվան և կաթնովը հիմնական ուտեստներն են եղել: Ցաման խաչերի կանգնեցման ընթացքում մեծ հացկերույթ էր կազմակերպվում, եզ էին մորթում, հարիսա

1 Շնորհակալություն ենք հայտնում հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ Ա. Բորբխյանին, Ք. Այվազյանին և Լ. Մկրտչյանին՝ այս հոդվածը գրելու ընթացքում արտահայտած արժեքավոր դիտողությունների համար:

պատրաստում (Մրգանձայանց 1978, 80–81): Հարիսան որպես ցամանա ժամի արարողության կարևոր աստիքուտ հիշատակվում է նաև «Սամանա ծոերում» (Սամանա ծոեր 1936, 174–175, 502–503, 558–559):

Հնարավոր է, որ զանազան սննդամթերք, ներառյալ հացահատիկ, նվիրաբերելով (համայնքային ճաշկերույթը ևս դիտարկում ենք որպես նվիրաբերություն կամ զոհաբերություն), մարդիկ ակնկալել են, որ նվիրաբերության հասցեատերը իրենց կպատասխանի՝ ուղարկելով նմանատիպ բարիքներ: Այս դեպքում ակնկալվող անձրևը, և ջուրը ընդհանրապես, հանդես են գալիս ոչ թե որպես նպատակ, այլ միջոց, ինչն ապահովել է բերքի առատությունը: Այս տեսակետի համաձայն՝ մարդիկ «ցաման խաչերի» միջոցով Աստծոց, իսկ վիշապաքարերի միջոցով՝ վիշապներից ակնկալել են հացահատիկի առան բերք, ընտանի կենդանիների պտղաբերություն և այլն, որոնք մարդկանց տրվել են անձրևի կամ ջրի աղբյուրների միջոցով<sup>2</sup>: Կարծում ենք, որ նոյնը վերաբերում է անձրևաբեր ծեսերի ժամանակ թրջող տարատեսակ խորհրդանշական առարկաներին և գերբնական էակներին ու դերակատարներին. աղջիկ երեխա(սեր)ի, նորի և այլ տիկնիկների, էջի, գորտի, խաչքարերի և այլ սուրբ քարերի վրա ջուր լցնելով մարդիկ ակնկալել են նոյնպիսի պատասխան անձրևի ձևով:

### Վիշապաքարերը և հացահատիկը

Արագածյան Կարմիր Սար հուշարձանի վիշապաքարերի պեղումների (Bobokhyan et al. 2018) և համապատասխան հնարքուարանական հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են ցորենի ու զարու ածխացած հատիկներ, որոնց միանշանակ մեկնաբանությունը խրթին է: Խնդիրն այն է, որ անցյալում թե՛ հանապազօրյա և թե՛ ծիսական ու տեսաների զիսավոր բաղադրիչը եղել է հացահատիկը: Այդպիսի «քազմագործառույթ» ուտեսաներից ամենատարածվածը շիլայանման կերակորներն են եղել՝ ներառյալ հարիսան (Օդարաշյան 1974, Թումանյան 2005, Խաչատրյան 2008): ՀՀ տարածքում պեղված բազմաթիվ նախաքրիստոնեական շրջանի դամբարանների անորթներում երբեմն հայտնաբերվում են խաչած հացահատիկի մնացորդներ, ենթադրաբար՝ շիլա, կամ, ավելի հաճախ՝ մանր եղչերավոր կենդանիների ուլքեր, ենթադրաբար՝ խաշլամա, կամ երկուաը միասին, ենթադրաբար՝ հարիսա, որը վկայում է անցյալում այս ու տեսաների ծիսական գործածության մասին (ըստ

Ներքին Նավերի, Ծաղկահովտի, Գեղարոտի, Սոյք 10-ի, Մաստարա 3-ի և այլ հնավայրերի նյութերի): Այս ուտեսաները, որոնք նախաքրիստոնեական անցյալու դրվել են հանգուցյաների հետ որպես սնունդ անդրշիրիմյան լյանքի համար, ցայսօր օգտագործվում են թաղման ծեսին առնչվող արարողություններում, մասնավորապես հոգեեացի ժամանակ<sup>3</sup>: Վերադառնարով վիշապաքարերի համատեքստից հայտնաբերված և դրանց համաժամանակյա հացահատիկին, չենք կարող բացառել, որ դրանք սովորական սննդի մնացորդներ են: Սակայն, հաշվի առնելով հնագիտական համատեքստի ծիսապատամոնքային բնույթը, ավելի հավանական է, որ դրանք ծիսական նպատակներով օգտագործված լինեն և, հավանաբար, որպես զոհաբերությունն ամսուցված ուտելիքի մնացորդներ են: Այս տեսակետի օգտին է խոսում հացահատիկի գտածների ածխացած լինելը:

Հացահատիկի ծիսական օգտագործման այլ օրինակներ ել են հայտնի: Օրինակ՝ կան ազգագրական տվյալներ, ըստ որոնց՝ ցորենի կամ զարու հատիկները հաճախ դնում էին սրբազն կառույցների հիմքում, որոնցից դրանք կարծես ծուռ էին (Մացականյան 1955, 82–140). ի դեպ, Կարմիր Սարում որոշ հատիկները հայտնաբերվել են վիշապաքարերի տեղադրման համար փորված փոսերից): Հացահատիկի ծիսական օգտագործումը վիշապների միջավայրում հնարավոր էր նաև մեռնող-հարություն առնող աստվածներին և լյանքի շարունականությանն առնչվող ծեսերի համատեքստում (հմնտ. Հարությունյան 2017, 358–365):

### Եզրակացություն

Այս պահին ունենք աղբյուրների ակունքներում դրված վիշապաքարերի համատեքստում հնագիտորեն հայտնաբերված հացահատիկի գտածներ: Դրանք համադրելով հարակից ազգագրական և բանահյուսական նյութերի հետ, ենթադրում ենք, որ վիշապներին նաև հացահատիկ են նվիրաբերվել՝ ակնկալելով, որ վերջիններս էլ մարդկանց կապահովեն երկրագործության համար այդքան անհրաժեշտ ջրով:

### Գրականություն

Արենյան Մ. 1941, «Վիշապներ» կոչված կոթողներն իրեն Աստղիկ-Դերկետող դիցուհու արձաններ, Երևան, Արմֆանի հրատ., 96 էշ:

Բրյուն Վ. Հ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 510 էշ:

<sup>2</sup> Հետաքրքիր է, որ Բովանըլիսի (պատմական Հարք) գավառից հայտնի «Ուսիկ կոուս (հասկ)» պատումով վիշապը իրեն փրկելու համար թագավորին երեք ուլքե հասկ է նվիրում (Մովսիսյան 1972, 162–163): Նմանատիպ ենթատեքստ ունի նաև ձկների ու օձերի թագավորի կոռլիմք՝ ցորենի հատիկի կամ մի պուտ խմորի միջոցով ենթոսին շնորի փոխանցելու հերթարային դրվագը (Զաքարյան 2016, 106):

<sup>3</sup> Ըստ մեր հետազոտությունների՝ Սյունիքում և Արցախում ցայսօր հոգեեացի պատմական տարր՝ է կորկուտը, որը ըստ էպության հարիսայի տարբերակ է: Հացահատիկը և դրանցով պատրաստվող ուտեսաների ծիսական գործածությունը թաղման ծեսով չի սահմանափակվում. դրանք օգտագործվում են հարսանիքի, նոր տարվա, ատամհատիկի և այլ տոների ու ծեսերի ժամանակ:

- Բորովյան Ա., Զիլիբերտ Ա., Հսիլա Պ. 2015, Վիշապա-քարերի հնագիտություն, Պետրոսյան Ա., Բորովյան Ա. (Խմբ.), Վիշապ քարակղողները, Երևան, «Գի-տություն», էջ 269–396:
- Զաքարյան Ե. 2016, Հիվանդության և բուժման առաս-ակելության հայկական հերիաթներում, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 287 էջ:
- Թումանյան Գ. 2005, Արուճի դամբարանադաշտի ուշբ-րոնզեդարյան №5 դամբարանը (թաղման ծննդ մեկ-նարաներու փորձ), Պատմաբանասիրական հան-դես, №3, էջ 160–172:
- Լիսիցյան Ս. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:
- Խաչատրյան Ռ. 2008, Ծիսական համայիր համա-տեքսում ծիսերգերի սկավածքներն իրեն կայուն ծիսահմայական բանաձներ, Պատմաբանասիրա-կան հանդես, №3, էջ 136–147:
- Հայրապետյան Թ. 2004, Անձրևաբեր և անձրևախա-փան ծեսերի երկակաղայիր ընկալումների շուրջ, Պատմաբանասիրական հանդես, №3, էջ 217–227:
- Հարությունյան Ս. 2017, Հայ առասպեկտարանություն, Երևան, «Աստարես», 527 էջ:
- Հովհաննիսյան Ռ. 2017, Հայատանի եզրիների «քրոկա-քարանե» («անձրևի հարս») և մյուս անձրևաբեր ծե-սերը, «Էջմիածին». կրօնագիտական և հայագիտա-կան հանդէս, հ. Ա. Ս. Աջմիածին, էջ 114–146:
- Հազիյան Ա. 1983, Արցախ, Հայ ազգագրություն և բանա-հյուսվածքներ, հն. 15, Երևան, ՀՍՀ ԳԱ հրատ., 156 էջ:
- Մկրտչյան Ս. Ս. 2016, Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, «Գիտություն», 400 էջ:
- Մսացականյան Ա. Շ. 1955, Հայկական զարդարվեստ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 659 էջ:
- Մովսիսյան Ս. (Բենսե) 1972, Հարք (Մշո Բովանդի), Հայ ազգագրություն և բանահյուսվածքներ, հն. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 182 էջ:
- Պետրոսյան Ա., Բորովյան Ա. (Խմբ.) 2015, Վիշապ քա-րակղողները, Երևան, «Գիտություն», 420 էջ:
- Սասնա Ծոեր, 1936, հն. Ա. Խմբ.՝ Ս. Արենյանի, Երևան, Պետական հրատ., 1128 էջ:
- Մրվանձյանց Գ. 1978, Երկեր, հն. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:
- Օդարաշյան Ա. Ա. 1974, Նավասարդյան տոնախմբությունների վերապրուկները, Պատմաբանասիրա-կան հանդէս, №3, էջ 113–126:
- Bobokhyan A., Gilibert A., Hnila P. 2018, Karmir Sar: New Evidence on Dragon Stones and Ritual Landscapes on Mount Aragats, Armenia, in: Batmaz A., Bedianashvili G., Michalewicz A., Robinson A. (ed.), Context and Connection. Essays on the Archaeology of the Ancient Near East in Honour of Antonio Sagona, Orientalia Lovaniensia Analecta, 268, Leuven, Peeters, p. 257–272.
- Hovsepyan R. 2018, On the Rain-Related Rituals of Tatev Village, Armenia (Ethnographic Field-Notes), Herald of Social Sciences, №3, p. 347–356.

## ՀԱՅԱՀԱՏԻԿԸ, ԱՆՁՐԵՎԱԲԵՐ ԾԵՍԵՐԸ ԵՎ ՎԻՃԱՊԻԵՐԸ

### ՈՒՆԱՆ ՀՈՎԱՆԵՍԻՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հովհաննիսյան Անդրադարձ է կատարվում անձրևաբեր ծեսերում հացահատիկի օգտագործման վերաբերյալ առկա ազգագրական, բանահյուսական և հնագիտական տվյալներին: Մերօրյա զուգահեռների վրա հիմնվելով՝ վիշապաքարերի միջավայրից հայտնաբերված հացարույսերը մեկնաբառավում են որպես զո-հարերություն և/կամ ծիսական մնանի մսացորդներ: Ենթադրվում է, թե վիշապներին հացահատիկ զոհա-բերելով, ակնկալել են, որ վերջիններս մարդկանց կապտասխանն ջուր կամ անձրև շնորհելով, ինչն էլ իր հերթին առատ թերը կապահովվի:

Հիմնարարեր. *հացահատիկ, ցորեն, զարի, հարիսս, անձրևաբեր ծես, «ցաման իսաչ», մարտաղ*:

## ЗЛАКИ, ОБРЯДЫ ВЫЗЫВАНИЯ ДОЖДЯ И ВИШАПЫ

### Роман Овсепян

Институт археологии и этнографии НАН РА

В статье рассматриваются этнографические, фольклорные и археологические данные по использованию злаков в обрядах вызывания дождя. Основываясь на современных параллелях, найденные в контексте вишшапов зерна можно интерпретировать как жертвоприношения или остатки ритуальной пищи. Есть предположения, что вишшапам приносили в жертву зерновые культуры, ожидая, что они ответят тем же – одарят людей водой или дождем, что в свою очередь обеспечит соответствующий урожай.

**Ключевые слова:** злаки, пшеница, ячмень, ариса, обряд вызывания дождя, «крест ярости», жертвоприношение.

## CEREALS, RAIN-MAKING RITUALS AND VISHAPS

### Roman Hovsepyan

Institute of Archaeology and Ethnography NAS RA

The present article is a review of ethnographic, folkloristic and archaeological data on the use of cereals in rain-making rituals. Based on contemporary parallels, the grains found in archaeological contexts of "vishapakars" (dragons) are interpreted as offerings or remnants of ritual food. We assume that cereals were sacrificed also to the vishshaps, expecting them to respond in the same way – giving to the people water and/or rain, which, in turn, would ensure the corresponding crop.

**Key words:** cereals, wheat, barley, harisa, rain-invoking rite, "wrath cross", sacrifice.